ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՆ, ԺԱՄԸ 11-00-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ ԿԱՅԱՑԱԾ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Մասնակցությամբ՝

- ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ՝ Առնակ Ավետիսյանի
- Արմավիր համայնքի ղեկավար՝ Դավիթ Խուդաթյանի
- Արաքս համայնքի ղեկավար՝ Ղազար Ղազարյանի
- Խոյ համայնքի ղեկավար՝ Արգիշտի Մեխակյանի
- Փարաքար համայնքի ղեկավար՝ Դավիթ Մինասյանի
- Բաղրամյան համայնքի ղեկավար՝ Շանթ Առաքելյանի
- Ֆերիկ համայնքի ղեկավար՝ Ռուստամ Հասանյանի
- Վաղարշապատ համայնքի ղեկավարի տեղակալ՝ Միեր Մկրտչյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի Գլխավոր քարտուղար՝ Արամ Հովհաննիսյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետի խորհրդական՝ Սաթենիկ Թովմասյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետի խորհրդական՝ Ֆելիքս Պողոսյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների
- Լրատվամիջոցների ներկայացուցիչների

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին

/Էդվարդ Հովհաննիսյան-

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ/

2. 2023 թվականի ընթացքում իրականացված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի ընթացքի, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացումների, ինչպես նաև 2024 թվականի սուբվենցիոն ծրագրերի ամբողջական փաթեթների ներկայացման ընթացքի մասին

/Լիլիթ Մուշեղյան-

Հ Հ Արմավիրի մարզպետի աշխատակազմի

զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ/

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի N 14-Ն որոշման պահանջների կատարման ընթացքը, կապված ինքնակամ կառույցների հաշվառման գործընթացի հետ

/Աշոտ Հովհաննիսյան–

Հ Հ Արմավիրի մարզպետի աշխատակազմի

քաղաքաշինության, հողաշինության և

ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ /

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի և բյուջեների կատարման մասին

/Վարազդատ Մկրտչյան-

Հ Հ Արմավիրի մարզպետի աշխատակազմի

ֆինանսական վարչության պետ/

5. Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված բնակչությանը տրամադրվող աջակցությունների բաշխման ընթացքի և նրանց առաջնահերթ կարիքների վերաբերյալ մարզի համայնքապետարանների կողմից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմ համապատասխան տեղեկատվություն ներկայացնելու անհրաժեշտության մասին

/Ասթինե Ապիտոնյան-

Հ Հ Արմավիրի մարզպետի աշխատակազմի

Առողջապահության և սոցիալական ոլորտի

հարցերի վարչության պետ /

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը մինչև մարզի խորհրդի աշխատանքների սկսելը, ողջունելով նիստի մասնակիցներին, մարզի խորհրդի

անդամներին ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության նորանշանակ պետ Ասթինե Ապիտոնյանին, ցանկանալով նրան հաջողություններ և հետագա արգասաբեր աշխատանք իր լիազորությունների շրջանակներում մարզի առողջապահության և սոցիալական հարցերի բնագավառներում առկա հիմնախնդիրների լուծման բարդ ու դժվարին գործընթացում:

Այնուհետև, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը մարզի խորհրդի հաստատմանը ներկայացրեց իր կողմից սահմանված << **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին** >> որոշման նախագիծը:

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի խորհրդի
Որոշումը

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2023 թվականի դեկտեմբերի 1–ի նիստի օրակարգը հաստատելու մասին

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 30–ի N 647-Ն որոշմամբ սահմանված մարզի խորհրդի կազմավորման և գործունեության կարգի 12–րդ կետի պահանջով.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհուրդը
որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2023 թվականի դեկտեմբերի 1–ի նիստի օրակարգը:

Օրակարգային <<**2023 թվականի ընթացքում իրականացված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի ընթացքի, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացումների, ինչպես նաև 2024 թվականի սուբվենցիոն ծրագրերի ամբողջական փաթեթների ներկայացման ընթացքի մասին** >> երկրորդ հարցի կապակցությամբ զեկուցմամբ հանդես եկավ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Լիլիթ Մուշեղյանը, որն իր զեկուցմամբ մասնավորապես նշեց, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի մասով 2023 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմում աշխատանքներն իրականացվել են հետևյալ ուղղություններով՝

- Նախորդ տարիների չավարտված և շարունակվող սուբվենցիոն ծրագրեր

- 2023 թվականի սուբվենցիոն ծրագրեր՝ ներկայացված հայտերի լրամշակման, հաստատման, իրականացման և մշտադիտարկման փուլերով և

- 2024 թվականի սուբվենցիոն ծրագրեր՝ նախնական հայտերի, ամբողջական փաթեթների կազմման և հաստատման ներկայացման փուլերով:

❖ **Նախորդ տարիների չավարտված սուբվենցիոն ծրագրեր**

2023 թվական են տեղափոխվել 2020-2021թթ. սկսված և 2023 թվական ֆինանսավորման կամ շինարարական աշխատանքներն ամբողջությամբ ավարտելու նպատակով տեղափոխված 5 ծրագրեր, որից՝

2020թ. -1 ծրագիր - Գայ համայնքի մանկապարտեզ,

2021թ. -4 ծրագիր – Դալարիկի ոռոգման ցանց, մարզասրահ, հանդիսությունների սրահ

Գեղակերտի ոռոգման ցանց /լոտ2/

❖ **2022թ. սուբվենցիոն ծրագրեր**

2022թ. սուբվենցիոն ծրագրերի ընթացքը՝ 30.11.2023թ-ի դրությամբ

Ավարտված	103	15 ծրագրի 60 ենթածրագրի շին.աշխատանքներն ավարտվել են 2022թ-ին
Ավարտական փուլում գտնվող	10	
Սկսված և ընթացքի մեջ գտնվող	11	
որից՝ աշխատանքներ չեն իրականացվում	*2*	
Չսկսված	23	
Ընդամենը - 41 ծրագիր	**147**	

❖ **2023թ. սուբվենցիոն ծրագրեր**

Համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 2023 թվականի սուբվենցիոն ծրագրի շրջանակներում հավանության են արժանացել ՀՀ Արմավիրի մարզի 31 սուբվենցիոն ծրագրեր՝ 150 ենթածրագրերով: Ծրագրերի ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 12.92 մլրդ դրամ, որից՝

-կառավարության համաֆինանսավորումը՝ 7.12 մլրդ դրամ կամ 55.1%

-համայնքի համաֆինանսավորումը՝ 5.78 մլրդ դրամ կամ 44.7%

-մասնավորի/բնակիչների ներդրումը՝ 9.98 մլն դրամ կամ 0.1%:

2023թ. սուբվենցիոն ծրագրերի ընթացքը՝ 30.11.2023թ-ի դրությամբ

Ավարտված	51

Ավարտական փուլում գտնվող	3
Սկսված և ընթացքի մեջ գտնվող	16
Չսկսված	81
Ընդամենը - 31 ծրագիր	**150-ը դարձել է 151 ***

<u>Սուբվենցիոն ծրագրերի ֆինանսավորումը</u>

2023թ. ընթացքում ընդունած ՀՀ կառավարության թվով 11 որոշումներով *ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմին սուբվենցիոն ծրագրերի պետական բյուջեի հատկացումը կազմում է ընդամենը **2,523,151,800** ՀՀ դրամ:*

*Վերջին որոշմամբ (Կառավարության 30.11.2023թ. նիստ) ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմին հատկացվել է **903,456,500 ՀՀ դրամ** (13 ծրագրերի 38 ենթածրագրերի համար):*

Համայնքապետարանների կողմից ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմ ներկայացված օրենսդրությամբ նախատեսված ծախսը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա **2023թ. նոյեմբերի 30-ի** դրությամբ կատարվել է 48 բնակավայրի 73 ենթածրագրի պետության մասնաբաժնի ֆինանսավորում՝ **1,496,092,395** ՀՀ դրամ: Գործընթացը շարունակվում է:

<u>Սուբվենցիոն ծրագրերի մշտադիտարկումը</u>

Սուբվենցիոն ծրագրերի մշտադիտարկում իրականացնելու նպատակով ՀՀ Արմավիրի մարզպետի որոշմամբ ստեղծվել է ոլորտային մասնագետներից բաղկացած մշտադիտարկման աշխատանքային խումբ (18.08.2023թ. N ՄՈ/363-Ա որոշում):
Մարզպետի և աշխատանքային խմբի կողմից տարվա ընթացքում մարզի համայնքների բնակավայրերում իրականացվել են սուբվենցիոն ծրագրերի իրականացման հսկողության, մշտադիտարկման, ավարտի փաստագրման, որակի համապատասխանության ուսումնասիրության այցելություններ:
2023թ. ընթացքում իրականացվող նախորդ տարիների, ինչպես նաև 2023թ. սուբվենցիոն ծրագրերի ընթացքի վերաբերյալ յուրաքանչյուր ամիս՝ մեկ կամ երկու անգամ (հանձնարարականով սահմանված ժամկետներում) պահանջվող ձևաչափով տեղեկատվություն է ներկայացվում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, աշխատանքները շարունակական են:
Բացի այդ, ՀՀ Արմավիրի մարզպետի 24.11.2023թ. N 01/16/08391-2023 շրջաբերական գրությամբ առաջարկվել է համայնքների ղեկավարներին 2022 և 2023 թվականներին հավանության արժանացած, սակայն մինչև 2023 թվականի տարեվերջ չավարտվող սուբվենցիայի ծրագրերը

2024 թվական տեղափոխելու համար ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագիծը կազմելու նպատակով՝ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմ ներկայացնել տեղեկատվություն տեղափոխման ենթակա համայնքի ծրագրերի վերաբերյալ՝ ձևաչափերին համապատասխան, կցելով այդ ծրագրերի շրջանակներում կապալառու կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերն ու համաձայնագրերը, ինչպես նաև ներկայացնելով ծրագրի կատարման ժամկետների ուշացմանն առնչվող հիմնավորումներն ու փաստաթղթերը (ժամկետ՝ 30.11.2023թ.):

Արմավիրի մարզի սուբվենցիոն ծրագրերի ընթացքի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը, ծրագրերի իրականացման ընթացքը լուսաբանող լուսանկարները, ինչպես նաև մշտադիտարկման համայնքային այցերը պարբերաբար հրապարակվում են ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում, ավելացնելով, որ համատեղ աշխատանքի արդյունքում այս շաբաթվա ընթացքում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածների նախարարության պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջով լուսաբանվում են մարզի 2023 թվականի հաստատված, ինչպես նաև 2023 թվականի ընթացքում ավարտված և իրականացվող սուբվենցիոն ծրագրերը՝ ըստ համայնքների:

❖ **2024 թվականի սուբվենցիոն ծրագրեր**

2024 թվականի սուբվենցիաներ ստանալու նպատակով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել ՀՀ Արմավիրի մարզի 7 համայնքների 42 սուբվենցիոն ծրագրերի (153 ենթածրագրերով) նախնական հայտեր և տեխնիկական բնութագրեր:

Ծրագրերի ընդհանուր արժեքը կազմում է **9.62 մլրդ դրամ**, որից՝

- պետական բյուջեի մասնաբաժինը կազմում է շուրջ **4.63 մլրդ դրամ,**
- համայնքային բյուջեի մասնաբաժինը՝ շուրջ **4.97 մլրդ դրամ**,
- մասնավորի և բնակիչների ներդումը՝ **13.13 մլն դրամ**:

Համաձայն ՀՀ կառավարության 16.11.2006թ. N 1708-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված կարգի 10-րդ և 11-րդ կետերի պահանջների՝ ***2024թ. սուբվենցիոն ծրագրերի ամբողջական փաթեթների ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմ ներկայացնելու վերջնաժամկետ էր սահմանված մինչև ս.թ. նոյեմբերի 25-ը:***

Մարզպետի աշխատակազմը սուբվենցիայի փաթեթն ստանալուց հետո, ստուգելով դրանց համապատասխանությունը կարգի դրույթներին և հայտերով ներկայացվող ծրագրերի իրականացման իրագործելիության և ֆինանսական ցուցանիշների համապատասխանության մասով առարկություններ չունենալու դեպքում կից գրությամբ փաթեթը ներկայացնում է ՀՀ ՏԿԵ նախարարություն՝ **մինչև ս.թ. դեկտեմբերի 5-ը:**

Ի դեպ, սուբվենցիոն ծրագրերի ամբողջական փաթեթները ներկայացվել են ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 1708-Ն որոշման մեջ կատարված փոփոխությունները և լրացումները հաշվի առնելով:

Այս պահի դրությամբ ըստ համայնքների պատկերն հետևյալն է

	Առաջին փուլ			Ամբողջական փաթեթների ներկայացման փուլ			
Համայնքը	**ծրագրերի թիվ**	**բնակավայրերի /ենթածրագրերի թիվը**	**ծրագրի ընդհանուր արժեքը (Ի փուլ), ՀՀ դրամ**	**ծրագրերի թիվ**	**բնակավայրերի թիվը**	**ենթածրագրերի թիվը**	**ծրագրի ընդհանուր արժեքը, ՀՀ դրամ**
Արմավիր	5	9	1 768 310 000	1	1	1	107,778,340
Մեծամոր	7	43	2 225 000 000	4	22	25	600,376,539
Խոյ	6	10	826 800 000				
Արաքս	13	35	1 399 679 189	2	5	5	193,886,186
Բաղրամյան	7	30	1 104 335 000				
Փարաքար	3	25	1 780 000 000				
Վաղարշապատ	1	1	516 000 000				
Ընդամենը	**42**	**153**	**9 620 124 189**	**7**	**28**	**31**	**902,041,065**

Ցուցանիշը գոհացուցիչ չէ, կարգով սահմանված ժամկետում ամբողջական փաթեթների չներկայացման հիմնական պատճառը ներկայացված ծրագրային հայտերի համար փորձաքննություն անցած նախագծանախահաշվային փաստաթղթերի բացակայությունն է:

Համաձայն ՀՀ ՏԿԵՆ 16.06.2023թ. N ԳՍ/16.2/16273-2023 հանձնարարականի՝ Մարզպետի 16.06.2023թ., 06.09.2023թ. շրջաբերական գրություններով առաջարկվել է համայնքների ղեկավարներին կազմել սուբվենցիայի ամբողջական փաթեթները և հնարավորինս սեղմ ժամկետներում ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմ՝ վերջնաժամկետ ***մինչև ս.թ. նոյեմբերի 25-ը՝*** հաշվի առնելով նախնական հայտերի և տեխնիկական բնութագրերի վերաբերյալ դիտողություններն ու առաջարկությունները: Իսկ ի լրումն ՀՀ Արմավիրի մարզպետի 23.11.2023թ. N 01/16/08412-2023 շրջաբերական գրությամբ առաջարկվել է համայնքների ղեկավարներին որոշմամբ սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 06.12.2023թ-ին, ներկայացնել հիմնավորված տեղեկատվություն՝ համայնքի նախնական հայտերով հաստատված սուբվենցիոն ծրագրերի ամբողջական փաթեթների չներկայացման պատճառների վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը նշված օրակարգային հարցի քննարկման արդյունքներով հանձնարարեց Հայաստանի

Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Լիլիթ Մուշեղյանին՝

1. 2021 թվականին հաստատված և 2023թ. շինարարական աշխատանքները չավարտված սուբվենցիոն ծրագրերը չտեղափոխել 2024 թվական, միայն տեղափոխել 2022-2023թթ. հաստատված և շինարարական աշխատանքները չավարտված կամ չսկսված սուբվենցիոն ծրագրերը/ենթածրագրերը:
2. Ամենօրյա հետևողական աշխատանք տանել ՀՀ կառավարության որոշումներով ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմին հատկացված սուբվենցիոն ծրագրերի պետական բյուջեի համաֆինանսավորման գումարները համապատասխան համայնքապետարանների աշխատակազմերին փոխանցելու ուղղությամբ: Մասնավորապես՝ մարզի համայնքապետարանների աշխատակազմերի պատասխանատուների հետ համատեղ հավաքագրել և ամբողջացնել որոշումներով հատկացված և դեռևս չֆինանսավորված սուբվենցիոն ծրագրերի/ենթածրագրրի օրենսդրությամբ նախատեսված ծախսը հիմնավորող փաստաթղթերի (կատարողական և այլ ակտեր, արձանագրություններ, հաշիվ վավերագրեր, փոխանցումներ) փաթեթները և ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պատասխանատուների կողմից ընդունվելուց հետո ներկայացնել ֆինանսական վարչություն՝ ֆինանսավորման:
3. Շարունակել համայնքապետարաններից 2024թ. սուբվենցիոն ծրագրերի ամբողջական փաթեթների ընդունման, ուսումնասիրության և ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշմամբ սահմանված ժամկետում (մինչև ս.թ. դեկտեմբերի 5-ը) ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնելու գործընթացը և ժամկետի ավարտից հետո ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

Օրակարգային << **Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի N 14-Ն որոշման պահանջների կատարման ընթացքը, կապված ինքնակամ կառույցների հաշվառման գործընթացի հետ**>> երրորդ հարցի կապակցությամբ զեկուցմամբ հանդես եկավ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Աշոտ Հովհաննիսյանը, որն իր զեկուցմամբ նշեց, որ ինքնակամ շինարարությունը մեծ վնաս է հասցնում մեր պետությանը և խանգարում է քաղաքային ու գյուղական բնակավայրերի բարեկարգմանը, ճարտարապետական պատշաճ տեսքի պահպանմանը, դրանց նախագծման և կառուցման աշխատանքներին: Այդ իսկ պատճառով վճռական պայքար պետք է մղել ինքնակամ շինարարությունների իրականացման դեմ:

Ինքնակամ շինարարությունների կանխարգելումը կարգավորվում է հատուկ իրավանորմերի օգնությամբ, հատկապես խոսքը վերաբերում է 2022 թվականի հունվարի 6-ից ուժի մեջ է մտած «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքին, համաձայն որի 2-րդ հոդվածի պահանջների՝ մինչև նշված օրենքն ուժի մեջ մտնելը կառուցված և ինքնակամ կառույցների հաշվառման կարգը սահմանող կառավարության որոշմամբ սահմանված կարգով հաշվառված ինքնակամ կառույցների (կիսակառույց ինքնակամ կառույցների հատվածների) վրա տարածվում են մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը գործող ինքնակամ կառույցների օրինականացմանը վերաբերող

կարգավորումները, այդ թվում՝ դրանց հիման վրա ընդունված ենթաօրենսդրական ակտերի դրույթները:
Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից կարող են սահմանվել ինքնակամ կառույցների (կիսակառույց ինքնակամ կառույցների հատվածների) օրինականացման առանձնահատկություններ: Ինքնակամ կառույցների (կիսակառույց ինքնակամ կառույցների հատվածների) վերաբերյալ տեղեկությունները և փաստաթղթերը հաշվառման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով ներկայացվում են Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ 2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի հունվարի 6-ը կառուցված ինքնակամ կառույցների (կիսակառույց ինքնակամ կառույցների հատվածների) դեպքում՝ Կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում (**15.01.2022թ.-15.03.2022թ.**), մինչև 2021 թվականի հունվարի 1-ը **քաղաքային բնակավայր ընդգրկող համայնքների, այսինքն՝ Արմավիրի, Մեծամորի և Վաղարշապատի** վարչական սահմաններում կառուցված ինքնակամ կառույցների (կիսակառույց ինքնակամ կառույցների հատվածների) դեպքում՝ **մինչև 2024 թվականի հունվարի 1-ը** և մինչև 2021 թվականի հունվարի 1-ը **բացառապես գյուղական բնակավայրերից բաղկացած համայնքների, այսինքն՝ Արաքսի, Խոյի, Փարաքարի, Բաղրամյանի և Ֆերիկի** վարչական սահմաններում կառուցված ինքնակամ կառույցների (կիսակառույց ինքնակամ կառույցների հատվածների) դեպքում՝ **մինչև 2025 թվականի հունվարի 1-ը:**
Ներկայացվեց նաև հունվարի 15-ից ուժի մեջ մտած Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի N 14-Ն որոշումը, որով սահմանվել է ինքնակամ կառույցների հաշվառման կարգը, որի համաձայն՝ Կադաստրի կոմիտեում չհաշվառված ինքնակամ կառույցը հաշվառելու նպատակով պատվիրատուն պետք է դիմի չափագրողին: Ի դեպ, պատվիրատու կարող է հանդես գալ ինքնակամ կառույցը հաշվառելու նպատակով չափագրողին դիմած ֆիզիկական կամ իրավաբանական անձը, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը: Հայաստանի Հանրապետության կառավարության նշված որոշման իրավակարգավորումներով, չափագրողը հաշվառման փաթեթը համաձայնեցնում է պատվիրատուի հետ, որից հետո պատվիրատուի կողմից չափագրման փաթեթի բոլոր տվյալները ստուգելուց հետո, հաշվառման փաթերի վերաբերյալ համաձայնություն ձեռք բերվելու դեպքում, պատվիրատուն և չափագրողը կազմում և ստորագրում են համապատասխան համաձայնագիր, որի ստորագրվելուց հետո չափագրողը հաշվառման փաթեթը ներբեռնում է առցանց չափագրման գրասենյակ: Նշված հաշվառման փաթեթը առցանց չափագրման գրասենյակ ներբեռնելու և այն հաստատելու պահից ձևավորվում է չափագրման ծածկագիր և ինքնակամ կառույցը համարվում է հաշվառված Կադաստրի կոմիտեի կողմից, որի վերաբերյալ պատվիրատուն տեղեկացվում է կարճ հաղորդագրության միջոցով (SMS):
Այս առումով ուշագրավ է այն փաստը, որ ինքնակամ կառույցը հաշվառելուց հետո առցանց չափագրման գրասենյակում ներբեռնված հաշվառման փաթեթը ենթակա չէ խմբագրման:
Ահա այս տեղեկատվությունն էր, որ քաղաքաշինության բնագավառում գնահատված է որպես առաջնահերթ և կստիպի քաղաքացիներին ու իրավաբանական անձանց, շինարարական

թույլտվություն պահանջող ցանկացած շինարարական գործունեություն իրականացնելուց առաջ, օրենսդրությամբ սահմանված կարգով, ստանալ շինարարական թույտվություն, իսկ շինարարական գործունեությունն իրականացնել, օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ:
Այս առումով բացառվում է նաև, օրենքն ուժի մեջ մտնելուց հետո, կառուցված ինքնակամ կառույցների հետագա օրինականացման հնարավորությունը:
Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո, արդեն արգելվում է ինքնակամ կառույցների օրինականացումը և վերջիններս ենթակա են քանդման: Ընդ որում, ինքնակամ կառույցների քանդման համար նույնպես նախատեսվում է երկու ռեժիմ: Առաջին դեպքը վերաբերում է հողամասի սեփականատիրոջ կողմից իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցի քանդմանը (ապամոնտաժմանը): Այսինքն՝ հողամասի սեփականատերը կարող է առանց դատարան դիմելու քանդել իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը: Երկրորդ իրավիճակը վերաբերում է ուրիշի հողամասում գտնվող ինքնակամ կառույցի քանդման հնարավորությանը, որը հնարավոր է իրականացնել, բացառապես, դատական կարգով: Միևնույն ժամանակ, սահմանվել է, որ պետական կամ համայնքային հողամասերում կառուցված ինքնակամ կառույցների քանդման մասին որոշում կայացնում է համայնքի ղեկավարը:
Ներկայացված խնդիրների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2022 թվականի համապատասխան շրջաբերական գրություններով ձեզ իրազեկվել և հանգամանորեն ներկայացվել է ոլորտը կարգավորող իրավակարգավորումները:
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը նշված օրակարգային հարցի քննարկման արդյունքներով առաջարկեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին՝
Համագործակցելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հետ, համայնքապետարանների առաջնահերթ խնդիրը համարել և համապատասխան խորհրդատվությամբ ապահովել համայնքների ազգաբնակչության պատշաճ իրազեկումն այն մասին, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և կարգով ինքնակամ շինությունների հաշվառումն իրականացնելու անհրաժեշտությունն առաջին հերթին բխում է իրենց իսկ շահերից:

Օրակարգային << **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի և բյուջեների կատարման մասին**>> չորրորդ հարցի կապակցությամբ զեկուցմամբ հանդես եկավ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վարազդատ Մկրտչյանը, որն իր զեկուցմամբ նշեց, որ 2023 թվականի համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների կողմից ընդամենը եկամուտների հավաքագրումը պլանավորվել է 13783664,3 հազ.դրամ՝ 2022 թվականի նույն ժամանակահատվածի պլանավորված 11533781,0 հազ. դրամի համեմատ. ավել է պլանավորվել 2249883,3 հազ. դրամով, 29,11,2023թ դրությամբ փաստացի հավաքագրումը կազմել է 12054069,3 հազ. դրամ , 30,11,2022թ թվականին

հավաքագրված 9365768,8 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 2688300,3 հազ. դրամով, կատարվել է 87,5%-ով, նախորդ տարվա 81,2%-ի համեմատ:

2023 թվականի համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրումը պլանավորվել է 4644634,7 հազ.դրամ՝ 2022 թվականի նույն ժամանակահատվածի պլանավորված 4410443,8 հազ. դրամի համեմատ ավել է պլանավորվել 234190,3 հազ. դրամով, 29,11,2023թ դրությամբ փաստացի հավաքագրումը կազմել է 4235171,3 հազ. դրամ , 30,11,2022թ թվականին հավաքագրված 3576604,1 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 658567,2 հազ. դրամով, կատարվել է 91,2%-ով, նախորդ տարվա 81,1%-ի համեմատ:

2023 թվականի համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների կողմից անշարժ գույքի հարկի հավաքագրումը պլանավորվել է 1173919,7 հազ.դրամ՝ 2022 թվականի նույն ժամանակահատվածի պլանավորված 1115906,4 հազ. դրամի համեմատ ավել է պլանավորվել 58013,3 հազ. դրամով, 29,11,2023թ դրությամբ փաստացի հավաքագրումը կազմել է 928793,9 հազ. դրամ , 30,11,2022թ թվականին հավաքագրված 874152,0 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 54641,9 հազ. դրամով, կատարվել է 79,1%-ով, նախորդ տարվա 78,3%-ի համեմատ:

2023 թվականի համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների կողմից փոխադրամիջոցների գույքահարկի հավաքագրումը պլանավորվել է 1778251,9 հազ.դրամ՝ 2022 թվականի նույն ժամանակահատվածի պլանավորված 1736885,7 հազ. դրամի համեմատ ավել է պլանավորվել 41366,2 հազ. դրամով, 29,11,2023թ դրությամբ փաստացի հավաքագրումը կազմել է 1617299,5 հազ. դրամ , 30,11,2022թ թվականին հավաքագրված 1299639,6 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 317659,8 հազ. դրամով, կատարվել է 90,9%-ով, նախորդ տարվա 74,8 %-ի համեմատ:

2023 թվականի համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների կողմից տեղական տուրքերի գծով հավաքագրումը պլանավորվել է 198769,9 հազ.դրամ՝ 2022 թվականի նույն ժամանակահատվածի պլանավորված 159049,0 հազ. դրամի համեմատ ավել է պլանավորվել 39720,9 հազ. դրամով, 29,11,2023թ. դրությամբ փաստացի հավաքագրումը կազմել է 230130,7 հազ. դրամ , 30,11,2022 թվականին հավաքագրված 193332,1 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 36798,7 հազ. դրամով, կատարվել է 115,8%-ով, նախորդ տարվա 121,6 %-ի համեմատ:

2023 թվականի համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների կողմից պետական տուրքերի գծով հավաքագրումը պլանավորվել է 80600,0 հազ.դրամ՝ 2022 թվականի նույն ժամանակահատվածի պլանավորված 66800,0 հազ. դրամի համեմատ ավել է պլանավորվել 13800,0 հազ. դրամով, 29,11,2023թ դրությամբ փաստացի հավաքագրումը կազմել է 88400,1 հազ. դրամ , 30,11,2022 թվականին հավաքագրված. 82241,7 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 6158,4 հազ. դրամով, կատարվել է 109,7%-ով, նախորդ տարվա 123,1%-ի համեմատ:

2023 թվականի համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների կողմից հողի և գույքի վարձակալության գծով հավաքագրումը պլանավորվել է 186303,0 հազ.դրամ՝ 2022 թվականի նույն ժամանակահատվածումի պլանավորված 180985,5 հազ. դրամի համեմատ ավել է պլանավորվել 5317,5 հազ. դրամով, 29,11,2023թ դրությամբ փաստացի հավաքագրումը կազմել է 177779,8 հազ. դրամ , 30,11,2022 թվականին հավաքագրված 182906,4 հազ. դրամի համեմատ, պակաս է հավաքագրվել 5126,6 հազ. դրամով, կատարվել է 95,4%-ով, նախորդ տարվա 101,1%-ի համեմատ:

2023 թվականի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից տեղական վճարների գծով հավաքագրումը պլանավորվել է 984785,3 հազ.դրամ՝ 2022 թվականի նույն ժամանակահատվածի պլանավորված 839144,7 հազ. դրամի համեմատ ավել է պլանավորվել 145640,6 հազ. դրամով, 29,11,2023թ դրությամբ փաստացի հավաքագրումը կազմել է 847658,5 հազ. դրամ , 30,11,2022 թվականին հավաքագրված 683693,7 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 163964,8 հազ. դրամով, կատարվել է 86,1%-ով, նախորդ տարվա 81,5%-ի համեմատ:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը, ըստ հարկատեսակների իրականացված հավաքագրումների վերաբերյալ վերը նշված տեղեկատվության ներկայացմամբ, ընդհանուր առմամբ գոհացուցիչ չհամարելով գրանցված ցուցանիշները, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին առաջարկեց՝

ա/ գործնական միջոցներ ձեռնարկել տարեկան կտրվածքով հավաքագրումների մակարդակն առնվազն 100% ցուցանիշով ապահովելու ուղղությամբ,

բ/ տեղական հարկերը, տուրքերը և վճարները, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային, ինչպես նաև պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարները չվճարող խոշոր պարտքատերերի նկատմամբ օրենքով սահմանված կարգով շարունակել խստագույնս կիրառել վարչարարության համապատասխան միջոցներ՝ համայնքների զարգացմանն ուղղված բազմաթիվ ծրագրեր իրականացնելու նպատակով:

Օրակարգային << **Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված բնակչությանը տրամադրվող աջակցությունների բաշխման ընթացքի և նրանց առաջնահերթ կարիքների վերաբերյալ մարզի համայնքապետարանների կողմից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմ համապատասխան տեղեկատվություն ներկայացնելու անհրաժեշտության մասին** >> հինգերորդ հարցի կապակցությամբ զեկուցմամբ հանդես եկավ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Ասթինե Ապիտոնյանը, որն իր զեկուցմամբ մասնավորապես նշեց, որ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված բնակչությանը մինչև օրս հատկացվել է 230.554.0 հազար ՀՀ դրամի սննդամթերք և սանիտարահիգիենիկ պարագաներ մեկամսյա կտրվածքով: Իսկ դպրոցահասակ ընտանիքներ ունեցող երեխաներին դպրոցական պարագաներ գնելու նպատակով մեկ երեխայի հաշվարկով միջինը 12.500 ՀՀ դրամ ընդամենը

հատկացվել է 14.965.000 ՀՀ դրամ: Ավելին, ներկայումս համապատասխան օժանդակություն ցուցաբերելու նպատակով շարունակվում է ծրագրից դուրս մնացած ընտանիքներից դիմումների ընդունումը:

Հատկանշական է, որ Լեռնային Ղարաբաղից տեղահանված և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ ժամանակավոր ժամանած ընտանիքների բնակարանային ճգնաժամը մեղմելու, առաջնային կարիքները, այդ թվում՝ սոցիալական, առողջության առաջնային պահպանության, մանկահասակ և դպրոցական տարիքի երեխաների ուսման և կրթության խնդիրները գույքագրելու, հաշվառելու և գնահատելու նպատակով դեռևս Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2023 թվականի սեպտեմբերի 26-ի N ՄՈ/410-Ա որոշմամբ ստեղծվել է կարիքների գնահատման հանձնաժողով, որն իր աշխատանքային խմբերի միջոցով ամենօրյա աշխատանքներ է իրականացնում բռնի տեղահանված բնակչության առջև ծառացած տարաբնույթ խնդիրներին հնարավոր լուծումներ տալու հարցում:

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված բնակչությանը Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ընդհանուր պահեստից մինչ օրս ստացվել և Արմավիրի մարզում տեղավորված բնակչությանը բախշվել է՝

- 400 մահճակալ
- 120 ներքնակ
- 130 խոհանոցային հավաքածու
- 1650 մանկական սնունդ
- 1330 հիգենիկ պայուսակ
- 1000 մանկական սննդի արկղ
- 2100 սննդի փաթեթներ /Համաշխարհային սննդի ծրագիր/
- 1498 40.00 ՀՀ դրամ արժեքով վաուչերներ / Մարդը կարիքի մեջ/
- 381 սննդի և հիգիենայի փաթեթներ 40.000 ՀՀ դրամ արժողությամբ / Մարդը կարիքի մեջ/:

Ի դեպ, աջակցություններ տրամադրելու գործընթացը շարունակվում է և առավելագույն արդյունք ստանալու համար ակնկալվում է բոլորիս համագործակցված և նպատակային աշխատանքը: Ցուցաբերվող և ցուցաբերվելիք աջակցություններն ավելի թիրախային դարձնելու նպատակով առաջարկվում է համայնքների կողմից ներկայացված պատասխանատու անձանց ներկայացնել այն առաջնային կարիքները, որոնք անհրաժեշտ են մեր հայրենակիցներին իրենց կենցաղային հարցերը կարգավորելու համար: Մարզպետի նախաձեռնությամբ իրականացվում են համայնքային հանդիպումներ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված բնակչության հետ, որտեղ նրանց կողմից բարձրացված խնդիրները ստանում են հնարավոր լուծումներ: Ի դեպ, հանդիպումների ընթացքում նրանց կողմից բարձրացված հարցերի գերակշիռ մասը վերաբերում է կենսաթոշակների և պետական նպաստների ստացման իրենց իրավունքի իրականացմանը: Հարկ է նշել, որ համաձայն <<Պետական նպաստների մասին >> և << Պետական կենսաթոշակների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների անձն իր իրավունքն իրականացնելու համար պետք է ունենա Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում գրանցում, որի ձեռք բերման համար կարող են դիմել իրենց մոտակա

անձնագրային և վիզաների բաժին և միաժամանակ ստանալ փախստականի կարգավիճակի քարտեր:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը նշված օրակարգային հարցի քննարկման արդյունքներով՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին առաջարկեց՝

ա/ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված բնակչության շրջանում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզետի աշխատակազմի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների հետ համագործակցված և նպատակային աշխատանքներ /տեղեկատվական, խորհրդատվական և այլն/ տանել աջակցության համապատասխան ծրագրերից դուրս մնացած ընտանիքներին դիմումների ընդունման շարունակականության վերաբերյալ պատշաճ տեղեկատվություն տրամադրելու նպատակով,

բ/ հատուկ ուշադրություն դարձնել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց առաջնային կարիքների արձագանքին, հումանիտար օգնությունների ճիշտ և հասցեական տեղաբաշխմանը,

գ/ ցուցաբերվող և ցուցաբերվելիք աջակցություններն ավելի թիրախային դարձնելու նպատակով համայնքապետարանների կողմից ներկայացված պատասխանատու անձանց ներկայացնել այն առաջնային կարիքները, որոնք անհրաժեշտ են մեր հայրենակիցներին իրենց կենցաղային խնդիրները կարգավորելու համար:

2.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական Սաթենիկ Թովմասյանին, Արմավիրի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Գոռ Հովհաննիսյանին, առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Ասթինե Ապիտոնյանին, անձնակազմի կառավարման,փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Դավիթ Դավթյանին՝

Շարունակել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բնակավայրերում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներ հետ հանդիպումների կազմակերպման գործընթացը՝ նրանց աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրերին ծանոթացնելու, ինչպես նաև նրանց հուզող տարաբնույթ խնդիրներն արձանագրելու և հնարավոր լուծումներ տալու նպատակով:

Օրակարգային հարցերի քննարկմամբ և ամփոփմամբ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը Արմավիրի մարզի խորհրդի արտահերթ նիստը հայտարարեց ավարտված:

Հայաստանի Հանրապետության

X

Արմավիրի մարզպետ՝
Էդվարդ Հովհաննիսյան

Արձանագրող՝ ՀՀ Արմավիրի մարզպետի
աշխատակազմի անձնակազմի կառավարման,
փաստաթղթաշրջանառության և հասարակայնության
հետ կապերի վարչության
պետ՝Դավիթ Դավթյան